

Պէջրութի մէջ գործող Զովիկեան Հանրային գրասենեակը կը հրապարակէ դաժան ոճիրներու ճշմարտութեան բացայայտման եւ պատասխանատուութեան վերաբերեալ փոտրեսք մը

Մամլոյ հաղորդագրութիւն



Զովիկեան Հանրային գրասենեակի հիմնադիր Լին Զովիկեան հրապարակեց ճշմարտութիւնը բացայայտող փոտրեսք մը՝ «Փոքրագոյն ճշմարտութիւնները», որուն առաջին հիւրն էր միջազգային կրօնական ազատութեան առաջնորդ Նատին Մայենզա Նկարը Տահիա Պուրիի կողմէ/Զովիկեան Հանրային գրասենեակ

Պէջրութ, Լիբանան – 9 հոկտեմբեր 2025: Շարունակուող անպատժելիութեան եւ քաղաքական անտեսումի պայմաններուն մէջ, Զովիկեան Հանրային գրասենեակը հրապարակած է փոտրեսքներու շարք մը, որ կը կոչուի «փոքրագոյն ճշմարտութիւններ» (Smallest truths), որուն նպատակն է բացայայտել, թէ ինչպէս վերապրողներու կողմէ ճշմարտութեան բացայայտումը կ'ամրապնդէ դաժան ոճիրներու համար պատասխանատուութիւնը:

Ընդարձակելով ապրած փորձառութեան մը փոքրագոյն մանրամասնութիւնները, որոնք յաճախ արդարադատութեան գործընթացներուն մէջ ամենէն որոշիչ ապացոյցներն են, շարքը նպատակ ունի ճշմարտութիւնը ջնջումէ պաշտպանել եւ օգնել ուժը տեղափոխել ոճրագործներէն դէպի վերապրողներն ու անոնց դաշնակիցները:

Իրաքանչիւր փոտքեսթ՝ տեւողութեամբ կարճ եւ վերլուծական ձեւաչափով, կ'արտացոլէ եւ կը համախմբէ դաժան ոճիրներու արձագանգելու տարիներու գործնական փորձառութիւնը: Զրոյցները կը ներկայացնեն մարդասիրական դիւանագիտութեան եւ միջազգային մարկային իրաւունքներու բարոյական եւ ռազմավարական շրջանակը՝ արդարութեան հաւանականութիւնը բարձրացնելու, արժանապատուութիւնը առաջ մղելու, յիշողութիւնը պաշտպանելու եւ համայնքային սեփականատիրութիւնը խթանելու: Չափաւոր երկխօսութեան եւ հիմնաւորուած մտորումներու միջոցով, «Փոքրագոյն ճշմարտութիւնները» կ'ուսումնասիրէ, թէ ինչպէս կարելի է ամրապնդել միջազգային օրինական ընթացակարգը, քաղաքականութիւնը եւ մարդասիրական համակարգերը՝ կեդրոնանալով վերապրողներու ապացոյցներուն եւ բարոյական աջակցութեան վրայ:

«Ճշմարտութեան բացայայտումը արդարութեան առաջին ձեւն է», ըսաւ Լին Զովիկեան, Զովիկեան Հանրային գրասենեակի հիմնադիրը: «Այս փոտքեսթը կը նպատակադրէ պահպանել բարոյական եւ փաստացի ճշմարտութեան պահպանման, երբ քաղաքականութիւնը եւ ուժը կը փորձեն զայն ջնջել»:

Շարքին մեկնարկը կատարելու համար, առաջին երեք փոտքեսթները հրապարակուած են որպէս երեք մասերէ բաղկացած խօսակցութիւն՝ հաղորդավար եւ ԶԼԳ-ի հիմնադիր Լին Զովիկեանի եւ միջազգային կրօնական ազատութեան առաջնորդ Նատին Մայենզայի միջեւ: Անոնք միասին կը քննարկեն վերապրողներու առաջնորդութեան, վայրագութիւններու միջոցով ճշմարտութեան պահպանման եւ տուած համայնքները բացառող խաղաղութեան գործընթացներու վտանգները:

«Փոքրագոյն ճշմարտութիւններ» ծրագիրի մեկնարկը կը յաջորդէ Եգիտիներու ցեղասպանութեան 11-րդ ամեակին, Պէլրութի նաւահանգիստի հինգերորդ տարելիցին եւ արցախահայութեան ցեղային զտումին երկրորդ ամեակի ոգեկոչման: 2015-էն ի վեր, Զովիկեան Հանրային գրասենեակը կը համագործակցի վերապրողներու հետ, պաշտպանելու համար անոնց համայնքներուն արժանապատուութիւնը եւ ձայները՝ մարդասիրական դիւանագիտութեան եւ օրէնքի միջազգային դատարաններուն մէջ:

«Իրաքանչիւր ոճիրի մէջ, փոքրագոյն ճշմարտութիւնները ամէնէն դժուարն են պահպանելու եւ բարձրաձայնելու, սակայն անոնք են, որ արդարութիւնը կարելի կը դարձնեն», ըսաւ Զովիկեան:

«Smallest truths» հասանելի է Spotify-ի, Apple Podcasts-ի, եւ YouTube-ի վրայ, իսկ զրոյցներուն գրուած տարբերակները եւ ուսումնական նիւթերը կրնաք գտնել

այստեղ՝ <https://zovpub.org/ZPO-Podcast>:

###

Զովիկան Հանրային Գրասենեակի մասին

2015 թուականէն ի վեր, Զովիկեան Հանրային գրասենեակը կը համագործակցի Միջին Արեւելքի եւ Հարաւային Կովկասի համայնքներուն եւ վերապրողներուն հետ՝ բարձրացնելու անոնց ձայները, վերականգնելու արժանապատուութիւնը եւ առաջ մղելու արդարութիւնը՝ հետազօտութեան, մշակոյթի եւ դիւանագիտութեան միջոցով:

2015 թուականէն ի վեր,
Զովիկեան Հանրային
գրասենեակը կը
համագործակցի Միջին
Արեւելքի եւ Հարաւային
Կովկասի համայնքներուն եւ
վերապրողներուն հետ՝
բարձրացնելու անոնց
ձայները, վերականգնելու
արժանապատուութիւնը եւ
առաջ մղելու արդարութիւնը՝
հետազօտութեան, մշակոյթի
եւ դիւանագիտութեան
միջոցով:

   

publicoffice@zovighian.org

www.zovighian.org